ՎԱՀԵ ՍԱՅԱԴՅԱՆ

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ուսումնասիրել պետություն-եկեղեցի կամ կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունները, նշանակում է քննարկել անձի, պետության, հասարակության բազմաշերտ հարաբերությունների կարեւորագույն կողմերը: Դրանով կարելի է բացահայտել տվյալ հասարակության եւ պետության մեջ կրոնական կազմակերպությունների անդամների կրոնա-քաղաքացիական իրավունքների դերակատարությունը եւ հոգեւոր ոլորտի, դասփիարակության որակական բնութագիրը: Յուրաքանչյուր հասարակության եւ պետության համար նշված հիմնահարցերի լուծումը պահանջում է տվյալ երկրի համապատասխան բնագավառը կարգավորող օրենքների ճշգրիտ կիրառում, որն իր հերթին թույլ կտա ապահովել իրավահավասար դաշտ:

Կրոնական կազմակերպությունները քաղաքացիների համատեղ հավատի, դավանության, ինչպես նաեւ կրոնական այլ պահանջմունքների բավարարման նպատակով ստեղծված միավորումներ են: Կրոնական կազմակերպություններ են եկեղեցական ու կրոնական համայնքները, թեմերը, վանքերը, կրոնական միաբանությունները, նրանց կրթական ու հրապարակչական հաստատությունները եւ այլ կրոնական-եկեղեցական հիմնարկները[1]:

Քաղաքացիների խումբը ճանաչվում է որպես կրոնական կազմակերպություն՝ եթե բավարարում է խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքի հետեւյալ պայմանները[2]՝ չի հակասում սույն օրենքի 3-րդ հոդվածի դրույթներին[3], հիմնվում է պատմականորեն կանոնացված որեւէ սուրբ գրքի վրա, իր դավանանքով մտնում է համաշխարհային ժամանակակից կրոնական-եկեղեցական համայնքների համակարգի մեջ[4], զերծ է նյութապաշտությունից, ուղղված է դեպի հոգեւոր ոլորտները եւ ընդգրկում է առնվազն 200 հավատացյալ անդամ: Կրոնական է համարվում այն միավո-

1 ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին գլ. 2, կրոնական կազմակերպության սահմանումը, հոդված 4, 06.07.1991, էջ 2:

2 Տե՛ս անդ, հոդվ. 5:

3Ըստ այդ դրույթի քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որեւէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին եւ արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու, կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս, Տե՛ս անդ, գլ. 2, հոդված 5 «ա», 06.07.1991, էջ 2:

4 Սույն պայմանները պարտադիր չեն միայն ազգային փոքրամասնությունների, կրոնական կազմակերպությունների համար՝ իրենց ազգային դավանանքով, տե՛ս ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին գլ. 2, կրոնական կազմակերպության սահմանումը, հոդված 5 «գ», 06.07.1991, էջ 2:

րումը, որի գործունեությունը, հիմքը որեւէ կրոնական ուսմունք է՝ ներառելով Աստծո մասին որոշակի գաղափար: Իսկ այն կրոնական կազմակերպությունները, որոնք գտնվում են ՀՀ տարածքից դուրս, չեն կարող ֆինանսավորվել այդ կենտրոնների կողմից[5]:

Կրոնական համայնքը կամ կազմակերպությունն իրավաբանական անձ է[6] ճանաչվում՝ պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից[7]: Կրոնական կազմակերպությանը գրանցվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին իրավաբանական անձանց պետական ռեգիստր պետք է ներկայացվի կրոնի գործերով պետական լիազորված մարմնի փորձագիտական եզրակացությունը՝ համապատասխան ոլորտը կարգավորող օրենքի 5-րդ հոդվածի «բ» եւ «ե» ենթակետերով սահմանված պայմանների վերաբերյալ[8]: Փորձագիտական եզրակացություն ստանալու համար կրոնական կազմակերպությունը պետք է ներկայացնի սույն օրենքի 5-րդ հոդվածում նշված պայմանները հավաստող փաստաթղթեր[9]:

Փորձագիտական եզրակացությունը դիմողին տրվում է դիմելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում: Կրոնական կազմակերպությունների գրանցումը պետական ռեգիստրում կարեւոր է ոչ միայն իրենց՝ կրոնական կազմակերպությունների, այլեւ պետության համար, քանի որ գրանցվելուց հետո, որպես իրավաբանական անձ, գտնվում են պետության պաշտպանության ներքո եւ իբրեւ այդպիսին՝ լիազորություններ են ձեռք բերում կրոնական կազմակերպություններին հատուկ գործողություններն իրականացնելու իրավունքներով: Հետեւաբար կրոնական կազմակերպությունը գրանցելու կամ մերժելու որոշումը՝ մերժման հիմքերի նշումով, մեկամսյա ժամկետում գրավոր ձեւով հանձնվում է դիմողին: Կրոնական կազմակերպության գրանցումը կարող է մերժվել գործող օրենսդրությանը հակասելու պարագայում: Հետեւապես մերժումը կամ որոշման կայացման՝ սույն օրենքով նախատեսված ժամկետի խախտումը, կարող է բողոքարկվել դատական կարգով, ինչը մեկ անգամ եւս փաստում է, որ ՀՀ-ում առաջնային տեղում են կրոնական կազմակերպությունների իրավունքները եւ ազատությունները: Իսկ գրանցված կրոնական կազմակերպության գործունեությունը կարող է դադարեցվել ինքնալուծարքի հետեւանքով, կամ դատարանի որոշմամբ՝ ՀՀ օրենքների խախտման դեպքում[10]:

Կրոնական կազմակերպությունների զգալի մասի համար գրանցվելու շահագրգռության առիթ է հենց «պետական ճանաչումը», որն իր հերթին առաջ է բերում կրոնական կազմակերպություններին օրենքով սահմանված կարգով իրենց լիազորութ-

5 Տե՛ս անդ, գլ. 4, հոդված 12, 06.07.1991, էջ 4:

6 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, գլուխ 5, իրավաբանական անձինք, • 1. իրավաբանական անձի հասկացությունը, հոդված 50, ընդունվել է՝ ՀՀ ԱԺ կողմից 1998թ. մայիսի 5-ին:

7 Տե՛ս անդ, գլ. 5, հոդված 14, 06.07.1991, էջ 4:

8 ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 6-ի N 204 որոշումով, վերապահվել է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին Հայաստանի Հանրապետության աշխատակազմի պետական կառավարչական հիմարկի կանոնադրությունը սահմանվել է ՀՀ կառավարության 02.05.2002 թ. N726-Ն որոշմամբ:

9 Տե՛ս անդ, գլ. 2, հոդված 5, 06.07.1991, էջ 2:

10 Տե՛ս անդ, գլ.5, կրոնական կազմակերպությունների գրանցումը, հոդված 16, 06.07.1991, էջ 5:

յուններից օգտվել, ճանաչվել եւ հանդես գալ իրենց անունից, որպես իրավաբանական անձ, կազմակերպել դրամահավաք, իրենց անդամներից անհատույց ստանալ հանգանակություններ, նվիրատվություններ, ընծաներ, օգտվել ԶԼՄ-ից, օրենքով սահմանված կարգով զբաղվել բարեգործությամբ, աստվածաբանական կրոնական ուսմունքներով եւ նմանատիպ գործողություններով, որոնք սահմանված են համապատասխան բնագավառը կարգավորող օրենսդրությամբ:

Կրոնական կազմակերպության կանոնադրությունը տվյալներ է պարունակում կրոնական կազմակերպության բնույթի եւ գործելու վայրի, դավանական պատկանելության, կրոնական միավորման կառուցվածքի, աղոթատեղիների եւ գույքային դրության, ձեռնարկություններ հիմնելու, ուսումնական եւ հրապարակչական հաստատություններ ստեղծելու մտադրությունների, գործունեության դադարեցման դեպքում գույքային եւ այլ հարցերի լուծման կարգի մասին, ինչպեսեւ պարունակում է տվյալ կազմակերպության գործունեության առանձնահատկությունների հետ կապված այլ դրույթներ[11]: Քաղաքացիական պարտականությունների եւ կրոնական համոզմունքների հակասության առանձին դեպքում քաղաքացիական պարտականությունների կատարման հարցը կարող է լուծվել այլընտրանքային սկզբունքով՝ օրենքով նախատեսված կարգով համապատասխան պետական մարմնի եւ տվյալ կրոնական կազմակերպության համաձայնությամբ[12]:

ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների ազատությունների իրավական կարգավորումն իրականացվում է Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, հռչակագրերով, ՀՀ օրենսդրությամբ՝ «Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով»[13], ՀՀ եւ Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին օրենքով եւ այլ իրավական ակտերով[14]:

Պետության եւ կրոնական կազմակերպությունների հարաբերությունների կարգավորման կարեւոր հիմնախնդիրներից է նաեւ եկեղեցու եւ պետության տարանջատումը եւ պետության կողմից կրոնական կազմակերպությունների գործունեությանն ու քարոզչությանը Ֆինանսավորում[15] չտրամադրելը: Պետությունը չի կարող Ֆինանսավորել ինչպես կրոնական կազմակերպությունների գործունեությունը, այնպես էլ աթեիզմի քարոզչությունը: Միեւնույն ժամանակ կրոնական կազմակերպությունների անդամներին ու սպասավորներին վերապահվում է հասարակական ու քաղաքական կյանքին մասնակցելու իրավունք՝ այլ քաղաքացիների հետ համահավասար[16]: Պետության եւ կրոնական կազմակերպությունների հարաբերությունները կարգավորում է նաեւ ՀՀ կա-

11 Տե՛ս անդ, գլ.5, հոդված 15, 06.07.1991, էջ 5:

12 Տե՛ս անդ, գլ.6 , հոդված 19, 06.07.1991, էջ 7:

13 ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից 1991թ. հունիսի 17-ին: Փոփոխություններ եւ լրացումներ կատարվել են Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 1997թ. սեպտեմբերի 19-ին եւ 2001թ. ապրիլի 25-ին:

14 ՀՀ եւ Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին օրենքն ընդունվել է ՀՀ Աժ-ի կողմից, 2007թ. փետրվարի 22-ի:

15 Տե՛ս անդ, գլ.6 հոդված 17,18, 06.07. 1991, էջ 6:

16 Տե՛ս անդ, հոդված 18, 06.07.1991, էջ 6:

ռավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինր[17], որ կրոնական կազմակերպությունների խնդրանքով աջակցում է առանձին հարցերի շուրջ պետական մարմինների հետ համաձայնության գալուն եւ անհրաժեշտ օգնություն է ցուցաբերում պետական մարմինների կողմից, պետության անունից եւ որպես միջնորդ մասնակցում է Հայաստանի Հանրապետության ու կրոնական կազմակերպությունների միջեւ ծագող վեճերի եւ հարցերի լուծմանը, ինչպես նաեւ իրականացնում է սույն օրենքով նախատեսված լիազորությունները[18]: Նույն հոդվածը նախատեսում է,որ պետության եւ կրոնական կազմակերպությունների սույն օրենքով չկանոնագրված հարաբերությունները կարգավորվում են պետության եւ համապատասխան կրոնական կազմակերպությունների վարչությունների համաձայնությամբ[19]: Սա եւս մեկ անգամ վկայում է, որ կրոնական կազմակերպությունների իրավունքները պաշտպանված են ՀՀ օրենսդրությամբ եւ գտնվում են պետության անմիջական հսկողության տակ: Հաշվի առնելով, որ կրոնական կազմակերպությունների իրավունքներն անսահման չեն՝ ինքնորոշման, գրանցման եւ գործունեության իրավունք ունենալով հանդերձ, վերջիններս չեն կարող ֆինանսավորվել կուսակցությունների կողմից, ինչպես նաեւ ֆինանսավորել նրանց[20]: Դրա փոխարեն կրոնական կազմակերպությունները կարող են դիմել իրենց հավատացյալ անդամներին՝ կամավոր դրամական եւ այլ նվիրատվությունների խնդրանքով, ստանալ հանգանակություններ եւ տնօրինել դրանք: Կրոնական կազմակերպությունների ստացած դրամական եւ այլ նվիրատվությունները, քաղաքացիներից ստացվող հասույթները հարկման ենթակա չեն[21]:

Համաձայն վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 205.$^{3}$ հոդվածի՝ ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների կողմից վերջիններիս կանոնադրություններով չնախատեսված գործողությամբ զբաղվելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով[22]: Համաձայն վարչական մեկ այլ՝ իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 205.$^{1}$ հոդվածի՝ պետական ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց կողմից կրոնական արարողությունների անցկացման նպատակով համերգասրահներ, մարզասրահներ, կինոթատրոններ, թատերական դահլիճներ եւ այլ տարածքներ հատկացնելու սահմանված կարգը խախտելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քառասնապատիկի չափով[23]: Իսկ մնացած դեպքերում հրապարակային ժամերգությունները, կրոնական ծեսերն ու արարողությունները կատարվում են հավաքների համար սահմանված կարգով[24]:

17 Տե՛ս անդ, հոդված 23, 06.07.1991, էջ 7:

18 Տե՛ս անդ, հոդված 23,«բ,գ.» կետ, 06.07.1991, էջ 7:

19 Տե՛ս ՀՀ վարչապետի 12.08.2002թ. 478-Ն որոշում, Տե՛ս նաեւ ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին, գլ.6 հոդված 23, «դ.» 06.07.1991, էջ 7:

20 ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակեեւպությունների մասին գլ.3, հոդված 13, 06.07.1991, էջ 4:

21 Տե՛ս անդ, գլ.3, հոդված 13, 06.07.1991, էջ 4:

22 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, գլ.14 կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ, հոդված 205$^{3}$, ընդունվել է՝ 06.12.1986թ.:

23 Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, գլուխ 13 կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումներ,հոդված 205$^{1}$, ընդունված՝ 06.12.1985թ.:

24 ՀՀ օրենքը խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների մասին, գլ.3, հոդված 7,« գ» կետ,

Խոսելով կրոնական կազմակերպությունների, խղճի, մտքի, կրոնի ազատության վերաբերյալ փաստերի մասին՝ չենք կարող չանդրադառնալ ՀՀ-ում կրոնական կազմակերպությունների գրանցման եւ ազատ գործունեության իրավունքներին: Կրոնական կազմակերպությունների հոգեւոր-կրոնական գործունեությունն իրականացվում է հետեւյալ իրավունքների հստակ ընդգծված շրջանակներում: Յուրաքանչյուրն ունի մտքի, խղճի եւ կրոնի ազատության իրավունք[25]: Սույն իրավունքը հնարավորություն է ընձեռում անձին իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունն ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների եւ պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով՝ արտահայտելով իր մտքի, խղճի եւ կրոնի ազատությունը[26]: Նշյալ իրավունքի արտահայտման իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության, բարոյականության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության համար[27]:

Ներկայումս ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունների թիվը, ըստ որոշ աղբյուրների, տատանվում է 45-65-ի սահմաններում: Այդ աղբյուրներից մեկի՝ ՀՀ կառավարության՝ ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության տվյալների համաձայն, ՀՀ-ում գրանցված կրոնական կազմակերպությունները հետեւյալներն են[28].

1. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի. Էջմիածնի Կաթողիկոսություն
2. Գանձասար Աստվածաբանական կենտրոն
3. Հայաստանի Հայ Կաթողիկե Եկեղեցի
4. Անարատ Հղության Հայ քույրերի միաբանություն
5. Ռուս Ուղղափառ Եկեղեցու Երեւան քաղաքի Ս. Տիրամոր եկեղեցու ուղղափառ համայնք
6. Ռուս Ուղղափառ Եկեղեցու Գյումրի քաղաքի Ս. Նիկոլայ Հրաշագործի եկեղեցու ուղղափառ համայնք
7. Ռուս Ուղղափառ Եկեղեցու Վանաձոր քաղաքի Ս. Աստվածածնի Ծննդյան եկեղեցու ուղղափառ համայնք
8. Ռուս Ուղղափառ Եկեղեցու ՀՀ Արարատի մարզի Դիմիտրով գյուղի Կիրիկ եւ Իուլիտա Ս. Նահատակների եկեղեցու ուղղափառ համայնք
9. Ծաղկաձոր քաղաքի ռուս մոլոկանների կրոնական համայնք
10. ՀՀ Եզդիների Ազգային Շեխե- Շեխու Բաքրա համայնք

(ընդունված 14.04.2011թ), էջ 3:

25 Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, գլուխ 2 մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները, հոդված 26, էջ 7, ընդունված է հանրաքվեով, 27.11.2005:

26 ՀՀ Սահմանադրություն, գ.. 2, հոդված 26, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 18, էջ 7, 27.11.2005: Տե՛ս կոնվեցիա մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (Եւրոպայի խորհուրդ), հոդված 9. կետ,1-ին, 04.11.1950թ. տե՛ս մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 18, ընդունվել եւ հռչակվել է՝ ՄԱԿ-ի գլխավոր անսամբլեայի կողմից, 10.12.1948թ, 217 Ա (3) բանաձեւի համաձայն:

27 Կոնվենցիա մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (Եվրոպայի խորհուրդ), հոդված 9. 2-րդ կետ, 04.11.1950թ.:

28 http://gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos%20gov.pdf

11. Հայաստանի Հրեական կրոնական համայնք

12. Արեւելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն

13. Երեւանի Ավետարանական եկեղեցի

14. Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միություն

15. Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի

16. Հայ եղբայրության եկեղեցի

17. Երեւանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

18. Ստեփանավանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

19. Արեւշատի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

20. Արարատի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

21. Արռվյանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

22. Վանաձորի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների եկեղեցի

23. Շիրակի մարզի Հայ ավետարանական-մկրտական եկեղեցի

24. Երեւանի Հայ ավետարանական-մկրտական քրիստոնյաների Բեթել եկեղեցի

25. Նշավանի ավետարանական-մկրտական եկեղեցի

26. Հայաստանի Ավետարանական-մկրտական եկեղեցի կրոնական կազմակերպություն

27. ՀՀ Երեւանի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

28. Երեւանի Ավետարանի հավատքի քրիստոնյաների կազմակերպություն

29. ՀՀ Երեւանի Էրեբունի համայնքի հոգեգալստականների կրոնական կազմակերպություն

30. Չարենցավանի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

31. Շիրակի մարզի Ավետարանի հավատքի քրիստոնյաների կազմակերպություն

32. ՀՀ Մասիսի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

33. ՀՀ Արարատի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

34. ՀՀ Արփաշատի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

35. ՀՀ Լոռու, Տավուշի մարզերի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

36. Կոտայքի, Գեղարքունիքի եւ Արագածոտնի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

37. Արմավիրի մարզի Ավետարանի հավատքի քրիստոնյաների կազմակերպություն

38. Էջմիածին քաղաքի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

39. Ավետարանի հավատքի քրիստոնյաների Միաբանություն եկեղեցի

40. Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի

41. Նոր սերունդ եկեղեցի կրոնական կազմակերպություն

42. Երեւանի ավետարանական հավատքի քրիստոնյաների եկեղեցի

43. Ասպծո օծյալ կրոնական կազմակերպություն

44. Ասպծո եկեղեցի-Օծյալ սերունդ կրոնական կազմակերպություն

45. Հայաստանի Կյանքի խոսք եկեղեցի

46. ՀՀ Աստծո ժողովուրդ Ամբողջ Ավետարանական եկեղեցի կրոնական կազմակերպություն

47. ՀՀ Ավետարանական հավատքի Ռեմա եկեղեցի կրոնական կազմակերպություն

48. Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Փրկության խոսք քրիստոնեական ավետարանական եկեղեցի

49. Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Փրկության խոսք քրիստոնեական ավետարանական եկեղեցի

50. Մրգաշատի Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Բեթել եկեղեցի կրոնական կազմակերպություն

51. Հայաստանի՝ Հիսուս Քրիստոսին հավատացողների եկեղեցի կրոնական կազմակերպություն

52. Հայաստանի Շաբաթապահ-գալստական (ադվենտիստական) եկեղեցի

53. Նորառաքելոց եկեղեցու Հայաստանի համայնք

54. Հայաստանի բահայիների համայնք

55. Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու Հայաստանի կրոնական համայնք

56. Ավետարանի քրիստոնյաների Երեւանի եկեղեցի (Վոչման Նիի Տեղական եկեղեցի)

57. Հայաստանի Հանրապետությունում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպություն

58. Հայաստանի Աստվածաշնչային Ընկերություն

59. ԱՄՆ-ի ԱԳԱՊԵ կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղ

60. Ֆրանսիայի Հույս Հայաստանի Համար կազմակերպության Հայաստանի մասնաճյուղ

61. Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ

62. Աստվածաշնչային Հայկական Միություն բարեսիրական կազմակերպություն

63. Վանաձորի Գեդեոն կրոնական բարեգործական կազմակերպություն

64. Հայաստանի Տիեզերական առաքելություն

65. Արորդիների Ուխտ կրոնական համայնք

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի[29] փվյալների համաձայն գրանցված կրոնական կազմակերպությունների թիվը հասնում է 45-ի, որի մեջ, որպես կրոնական կազմակերպություն, բացակայում են Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Գանձասար Աստվածաբանական կենտրոնը, Հայաստանի Մխիթարյան կենտրոնը եւ այլն, իսկ որոշ կրոնական կազմակերպությունների բացակայությունը, ենթադրում ենք, որ պայմանավորված է նրանց ինքնալուծարքով:

1. Էջմիածին քաղաքի Ավետարանի հավատքի քրիստոնյաներ կրոնական կազմակերպություն

29 https://www.e-register.am

2. Նորառաքելական եկեղեցու Հայաստանի համայնք կրոնական կազմակերպություն

3. Արեւելքի ասորական կաթողիկոսության սուրբ Առաքելական եկեղեցի Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն

4. ՀՀ Ավետարանի հավատքի քրիստոնյաների միաբանություն եկեղեցի կրոնական կազմակերպություն

5. Հայ եղբայրության եկեղեցի կրոնական կազմակերպություն

6. ՀՀ-ում Եհովայի վկաների քրիստոնեական կրոնական կազմակերպություն

7. ՀՀ Մասիսի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

8. ՀՀ Երեւանի Էրեբունու համայնքի հոգեգալստականների կրոնական կազմակերպություն

9. Բահայի հավատքի հետեւորդների համայնք կրոնական կազմակերպություն

10. Երեւանի Ավետարանի հավատքի քրիստոնյաներ կրոնական կազմակերպություն

11. Շիրակի մարզի Ավետարանի հավատքի քրիստոնյաներ կրոնական կազմակերպություն

12. Խոսքան միջազգային քրիստոնեական կրոնական կազմակերպություն

13. Վանաձորի հայ ավետարանական, մկրտական քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

14. Արմավիրի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

15. Արեւշատի հայ ավետարանական մկրտական քրիստոնեաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

16. Ստեփանավանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

17. Արարատի հայ ավետարանական մկրտական քրիստոյանաերի եկեղեցի կրոնական կազմակերպություն

18. ՀՀ եզդիների ազգային Շեխե-Շեխու Բաքրա հոգեւոր խորհուրդ կրոնական կազմակերպություն

19. Հայաստանի՝ Հիսուս Քրիստոսին հավատացողների եկեղեցի կրոնական կազմակերպություն

20. Վանաձորի Ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

21. Հայաստանի՝ ավետարանական հավատքի քրիստոնյաների կյանքի խոսք եկեղեցի կրոնական կազմակերպություն

22. ՀՀ Երեւանի՝ Ավետարանի հավատքի քրիստոյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

23. Երեւանի՝ Սուրբ Տիրամոր ռուս ուղղափառ եկեղեցու համայնքի կրոնական կազմակերպություն

24. Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցու Հայաստանի միություն կրոնական կազմակերպություն

25. Նոր սերունդ եկեղեցի կրոնական կազմակերպություն

26. Մրգաշատի մեր տեր եւ փրկիչ Հիսուս Քրիստոսի «Բեթել» եկեղեցի կրոնական կազմակերպություն

27. Աստծո օծյալ քրիստոնեական եկեղեցի կրոնական կազմակերպություն

28. Երեւանի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Բարի սամարացի» եկեղեցի կրոնական կազմակերպություն

29. Արմավիրի մարզի ավետարանական հավատքի քրիստոնյաների «Աստծո եկեղեցի»-«օծյալ սերունդ» կրոնական կազմակերպություն

30. ՀՀ Լոռու, Տավուշի մարզերի ավետարանի հավատքի քրիստոնյաների եկեղեցի կրոնական կազմակերպություն

31. Աստծո ժողովուրդ ամբողջ ավետարանական եկեղեցի կրոնական կազմակերպություն

32. Սյունիքի մարզի Գորիս քաղաքի փրկության խոսք քրիստոնեական ավետարանական եկեղեցի կրոնական կազմակերպություն

33. Կոտայքի, Գեղարքունիքի եւ Արագածոտնի մարզերի ավետարանի հավատքի քրիստոնյաներ կրոնական կազմակերպություն

34. Վանաձորի Սուրբ Աստվածածնի ծննդյան ռուս ուղղափառ եկեղեցու համայնքի կրոնական կազմակերպություն

35. Հայաստանի ավետարանական մկրտական եկեղեցի կրոնական կազմակերպություն

36. Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցի կրոնական կազմակերպություն

37. ՀՀ Արարատի մարզի Դիմիտրով գյուղի Կիրիկ եւ Իուլիտա Սուրբ նահատակների ռուս ուղղափառ եկեղեցու համայնք կրոնական կազմակերպություն

38. Ծաղկաձոր քաղաքի ռուս մոլոկանների կրոնական համայնք կրոնական կազմակերպություն

39. ՀՀ ավետարանական հավատքի «Ռեմա» եկեղեցի կրոնական կազմակերպություն

40. Երեւանի հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղցի կրոնական կազմակերպություն

41. Ավետարանի քրիստոնյաների Երեւանի եկեղեցի կրոնական կազմակերպություն

42. Ավետարանական հավատքի քրիստոնյաների «Այրվող մոմերի» եկեղեցի կրոնական կազմակերպություն

43. Հայաստանյաց ավետարանական եկեղեցի կրոնական կազմակերպություն

44. Նշավանի ավետարանական մկրտական եկեղեցի կրոնական կազմակերպություն

45. Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցու Հայաստանի կրոնական համայնք:

Կրոնական կազմակերպությունները լինում են եւ՛ կրոնական, եւ՛ կրթական, եւ՛ քաղաքական, եւ՛ առեւտրային ՝ կրոնականությունն օգտագործելով որպես քող: Ոլորտի գիտակները նմանատիպ կրոնական կազմակերպություններն անվանում են «առեւտրային պաշտամունքներ»: Այդպիսի կրոնական կազմակերպության բնորոշ օրինակներից է ՀՀ-ում գործող «Հերբալայֆ»[30] հասարակական կազմակերպությունը, որը կրոնական ուսմունք չունի, բայց գործելակերպն ամբողջովին կրոնական է: Հետեւապես հարկ է կարգավորել համապատասխան ոլորտն ապահովող օրենսդրական դաշտը, փոփոխություններ ու լրացումներ կատարել քրեական օրենսգրքում՝ սահմանելով կրոնական հողի վրա կատարված հանցագործությունները որպես քրեորեն պատժելի արարք: Այն որպես հանցագործության տեսակ իր տեղը կունենա քրեական օրենսգրքում՝ այլ տեսակի եւ բնույթի հանցագործությունների շարքում: Նմանատիպ օրենքի առկայության պարագայում կրոնական հողի վրա կատարված հանցագործությունները նախկինի պես չեն դասվի կենցաղային եւ այլ բնույթի հանցագործությունների շարքին: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ օրենսդիր մարմինն ընդունի օրենք, որը կարգելի «վտանգավոր եւ քողարկված» կրոնական կազմակերպությունների գործունեությունը, որոնք արգելում են հասարակության զորացումը՝ խարխլելով պետության հիմքերը եւ հարվածի տակ դնելով պետական անվտանգությունն ինչպես ներքին, այնպես էլ արտաքին դաշտում: Այդպիսի օրենքի ընդունումը կսահմանափակի կրոնական կազմակերպությունների լիազորությունները, որոնք ի սկզբանե ուղղված են եղել մարդու կյանքի ու առողջության դեմ: Անհրաժեշտ է նաեւ ընդունել դեպքերը բնութագրող եւ արգելող օրենքներ, որոնք կկանխեն եւ կպատժեն հնարավոր չարաշահումներն ու իրավախախտումները, ինչպես նաեւ սահմանել գրանցված կրոնական կազմակերպությունների կարգավիճակի տարբերակումները, որը հնարավորություն կտա առավելագույնս ճանաչելի դարձնելու նրանց բնույթը, տեսակները, նպատակները, գործունեության թափանցիկությունն ու մատչելիությունը՝ պետության, հասարակության, ԶԼՄ-ների, ինչպեսեւ այն կազմակերպությունների ու հիմնարկների համար, որոնք վերջիններիս մասին տեղեկություններ ստանալու առաքելություն եւ ցանկություն կունենան:

30 Աղանդների պատմության մեջ նորագույն երեւույթ է մեր երկրում հայտնի առեւտրային ուղղվածություն ունեցող այս կրոնական կազմակերպությունը, ter-hambardzum.com.«Հերբալայֆ», 24.07.2011, գլխավոր էջ: